



«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, քաղաք Երևան, Տիգրան Մեծի 4

ՀՎՀՀ՝ 02591995

Հեռ./ֆաքս՝ /010/ 524 724

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԻԴԻՏԻ

Համայնքի բյուջեն տեղական ինքնակառավարման մարմիններին Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման ֆինանսական ծրագիր է: Համայնքի բյուջեն ակնկալվող եկամուտների և առաջարկվող ծախսերի համապարփակ թվարկումն է գալիք ֆինանսական տարվա համար, կառավարման մարմինների յուրաքանչյուր գործառույթի գծով: Համայնքի բյուջեի որպես կառավարման միջոց կարող է օգնել համայնքին սահմանելու և գնահատելու համայնքային ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը: Այն հնարավորություն է տալիս բարձրացնելու համայնքի կառավարման պատասխանատվությունը և հաշվետու լինելու աստիճանը: Բյուջեի առավել արդյունավետ, օգտավետ, նպատակային լինելու տեսանկյունից շատ կարևոր է բյուջեի կատարման նկատմամբ պարբերական հսկողության իրականացումը, ինչպես նաև բյուջեի կատարողականի վերլուծության ենթարկումը:

Ամասիա համայնքի ղեկավարի որոշմամբ հաստատված Ամասիայի համայնքապետարանի ներքին աուդիտի 2025 թվականի տարեկան ծրագրի համաձայն իրականացվել է Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետավորման գործընթացի, ծախսերի ըստ բյուջետային գործառնական և տնտեսագիտական դասակարգման կատարման կատարողական աուդիտ, որի շրջանակներում ուսումնասիրվել և վերլուծվել է կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները,

որոնք ներառում են 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ բյուջեի կատարման եկամուտների և ծախսերի հաշվետվությունները:

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ թեև բյուջեն կազմելիս հիմքում դրվել են նախորդ տարիների ցուցանիշների համեմատականները (դինամիկան), այդուհանդերձ արձանագրվել են թերկատարումներ որոշ եկամուտների և ծախսային ուղղությունների մասով: Կատարված վերլուծությունները, ներկայացված բացատրություններն և պարզաբանումները ներկայացված են ստորև.

Շիրակի մարզի Ամասիա համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման փարեկան հաշվեքվության կատարողականի աուդիտ

Ամասիա համայնքի 2024 թվականի բյուջեի ամփոփ աղյուսակ եկամուտների գծով
/հազ.դրամ/

Հոդվածների անվանումը	Եկամուտների պլան	Ճշտված պլան	Փաստացի մաս	Շեղում գումարով		%
				+	-	
1. Հարկային եկամուտ	74,885	77,082	65,771		-11,311	85%
ա) անշարժ գույքի հարկ	38,766	39,807	34,194		-5,613	86%
բ) գույքային հարկեր այլ գույքից	34,589	35,744	28,839		-6,905	81%
գ) տուրքեր	1,081	1,081	2,433	1,352		225%
դ) Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր	450	450	306		-144	68%
2. Պաշտոնական դրամաշնորհներ	377,330	464,961	447,010		-17,951	96%
ա) Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	377,330	380,162	377,330		-2,832	99%
բ) Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	0	84,799	69,680		-15,119	82%
3. Այլ եկամուտներ	48,260	154,057	162,773	8,716		106%
ա) գույքի վարձակալությունից եկամուտներ	31,495	31,495	40,129	8,634		127%

բ) Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից	8,699	8,699	8,528		-171	98%
գ) վարչական գանձումներից	8,066	8,066	7,353		-713	91%
դ) Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	0	11,376	9,146		-2,230	80%
ե) Այլ եկամուտներ	0	94,421	97,617	3,196		103%
Ընդամենը	500,475	696,100	675,554			97%

Ամսախա համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման ամփոփ աղյուսակ ծախսերի գծով

/հազ.դրամ/

Հոդվածների անվանումը	Ծախսերի պլան	Ճշտված պլան	Փաստացի մաս	Շեղում գումարով		%
				+	-	
1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	243,669	271,994	237,005		-34,989	87%
2. Հասարակական կարգ	3,700	3,700	271		-3,429	7%
3. Տնտեսական հարաբերություններ	28,420	138,569	119,047		-19,522	86%
4. Շրջակա միջավայրի պաշտպանություն	12,350	12,350	6,732		-5,618	55%
5. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	20,661	120,020	92,267		-27,753	77%
6. Առողջապահություն	1,500	1,500	0		-1,500	0%
7. Հանգիստ, մշակույթ և կրոն	37,100	133,617	116,441		-17,176	87%
8. Կրթություն	38,755	40,605	38,012		-2,593	94%
9. Սոցիալական պաշտպանություն	15,120	15,310	12,033		-3,277	79%
10. Հիմնական բաժինների չդասվող պահուստային ֆոնդեր	99,200	21,212	0		-21,212	0%
Ընդամենը	500,475	758,877	621,808		-137,069	82%

2024 թվականին համայնքի բյուջեով նախատեսված որոշ եկամտատեսակների գծով կատարվել են թերհավաքագրումներ իսկ գործառնական դասակարգման որոշ ծրագրերով նախատեսված մի շարք ծախսեր թերակատարվել են կամ չեն կատարվել, որոնց վերաբերյալ ղեկավարության կողմից ներկայացվել են ներքոհիշյալ բացատրություններն ու պարզաբանումները.

Եկամուտներ

2024 թվականին համայնքի բյուջեով նախատեսված եկամտատեսակների գծով հավաքագրումները թերակատարվել և գերակատարվել են, որոնց վերաբերյալ ղեկավարության կողմից ներկայացվել են հետևյալ բացատրություններն ու դիտարկումները.

1. Հարկային եկամուտ /85%/ 65,771 հազ. ՀՀ դրամ

Անշարժ գույքի հարկի 15 տոկոս թերակատարումը պայմանավորված բնակչության անվճարունակության հետ, ինչպես նաև՝ համայնքի՝ մեծ թվով բնակիչների բացակայությամբ:

2. Տուրքեր՝ /225%/ 1,352 հազ. ՀՀ դրամ

Տուրքերի 115 տոկոս գերակատարումը պայմանավորված է համայնքում իրականացվող դպրոցաշինության հետևանքով շին. թույլտվության համար գանձվող տուրքերի ավելացմամբ:

3. Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր /68%/ 306 հազ. ՀՀ դրամ

Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքերի 32 տոկոս թերակատարումը պայմանավորված է ՔԿԱԳ-ից գանձվող պետական տուրքերի պլանավորվածից ցածր մակարտակով:

4. Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից /82%/ 69,680 հազ. ՀՀ դրամ

Կառավարման այլ մակարդակներից ստացված կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհների 18 տոկոս թերակատարումը պայմանավորված է 2024 թվականին պլանավորված բայց չավարտված սուբվենցիոն ծրագրի օբյեկտի համար գումար չստանալով:

5. Գույքի վարձակալությունից եկամուտներ / 127%/ 40,129 հազ. ՀՀ դրամ

Գույքի վարձակալությունից եկամուտների 27 տոկոսով գերակատարումը պայմանավորված է տարվա ընթացքում կնքված նոր վարձակալական պայմանագրերով:

Ծախսեր

2024 թվականին ըստ գործառնական դասակարգման ներքոհիշյալ ծրագրերով նախատեսված մի շարք ծախսեր թերակատարվել են կամ չեն կատարվել, որոնց վերաբերյալ ղեկավարության կողմից ներկայացվել են հետևյալ բացատրություններն ու դիտարկումները.

1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /87%/ 237,005 հազ. ՀՀ դրամ

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների 13 տոկոս թերակատարումը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում իրականացված տնտեսումներով:

2. Հասարակական կարգ / 7% / 271 հազ. ՀՀ դրամ

Հասարակական կարգին առնչվող ծախսերի 93 տոկոս թերակատարումը պայմանավորված է պլանավորված ծախսերի կատարման համար նախապայմանների բացակայությամբ:

3. Տնտեսական հարաբերություններ / 86% / 119,047 հազ. ՀՀ դրամ

Տնտեսական հարաբերություններին առնչվող ծախսերի 14 տոկոս թերակատարումը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում իրականացված տնտեսումներով:

4. Շրջակա միջավայրի պաշտպանություն / 55% / 6,732 հազ. ՀՀ դրամ

Շրջակա միջավայրի պաշտպանությանն առնչվող ծախսերի 45 տոկոս թերակատարումը պայմանավորված է աղբահանության՝ պլանավորված, բայց չիրականացված ծրագրերով:

5. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն /77%/ 92,267 հազ. ՀՀ դրամ

Բնակարանային շինարարությանը և կոմունալ ծառայությանն առնչվող ծախսերի 23 տոկոս թերակատարումը պայմանավորված է գնումների մասով տնտեսումների առկայությամբ:

6. Առողջապահություն / 0% / 0 հազ. ՀՀ դրամ

Առողջապահությանն առնչվող ծախսերի կատարման բացակայությունը պայմանավորված է Ամասիայի ԱԿ-ի հետ համայնքի բնակչությանը առողջապահական ծառայություններ մատուցելու մասին պայմանագիր չկնքելու փաստով:

7. Հանգիստ, մշակույթ և կրոն / 87% / 116,441 հազ. ՀՀ դրամ

Հանգստին, մշակույթին և կրոնին առնչվող ծախսերի 13 տոկոս թերակատարումը պայմանավորված է գնումների մասով տնտեսումների առկայությամբ:

8. Սոցիալական պաշտպանություն / 79% / 12,033 հազ. ՀՀ դրամ

Սոցիալական պաշտպանությանն առնչվող ծախսերի 21 տոկոս թերակատարումը պայմանավորված է բյուջեի կազմման հիմքում դրված, նախորդ տարիների ցուցանիշների դինամիկան հաշվի առնելու մոտեցման արդյունքում վարակների կանխարգելման վերաբերյալ ծերերի կենցաղային խնամքի հետ կապված ծրագիր պլանավորելու և չիրականացնելու փաստով:

Առաջարկություններ

Իրականացված վերլուծության արդյունքում պարզվել է, որ բյուջեի կատարողականը բոլոր էական առումներով հիմնականում ճշմարիտ է ներկայացնում Ամասիա համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման եկամուտների և ծախսերի մասին 2024 թվականի ընթացքում և դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա իրական պատկերները՝ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Սակայն առավել արդյունավետ և արդյունքահեն բյուջեի ձևավորման նպատակով առաջարկում ենք.

- Հաջորդ տարիների համար բյուջեի նախագծման գործընթացում վերլուծվող ցուցանիշների մշակման հիմքում դնել որոշակի չափանիշներ, որոնցից են՝ Ճշտությունը (հնարավոր է արդյոք ժամանակի ընթացքում պարզել ցուցանիշի ճշտության աստիճանը), Կայունությունը (եթե ցուցանիշի գնահատումը պարբերաբար կրկնվի, արդյոք արդյունքները կայուն կլինեն), Ամբողջականությունը (արդյոք ցուցանիշը տալիս է իրավիճակի ամբողջական պատկերը), Վերահսկելու հնարավորությունը (արդյոք օգտագործողը կարող է վերհսկել և կարգավորել ծառայության ֆունկցիոնալ ցուցանիշները), Համեմատելիությունը (կարող է արդյոք ցուցանիշն օգնագործվել այլ ժամանակահատվածում կամ այլ տարածաշրջանում գնահատված ցուցանիշների հետ համեմատության համար) և այլն:
- Անհրաժեշտությունից ելնելով կատարել պլանի պարբերական ճշգրտումներ եկամուտների և ծախսերի համապատասխան նվազումների կամ

ավելացումների վերաբերյալ հավաստի տեղեկատվության առկայության դեպքում:

- Կատարել Բյուջեի միջոցների հաշվին պահվող նախադպրոցական, արտադպրոցական և կոմունալ կազմակերպությունների, ինչպես նաև առողջապահական կազմակերպությունների առանձին ցուցանիշների մանրամասն վերլուծություններ:
- Բյուջեի պլանավորման գործընթացում նախորդ տարիների ցուցանիշների համեմատականները (դինամիկան) դիտարկելիս հաշվի առնել անցյալում առկա ֆորսմաժորային իրավիճակների բացակայությունը՝ այնպիսի ծախսերի նախատեսումից խոսափելու համար, որոնց անհրաժեշտությունը պայմանավորված էր նախորդ տարիների, այլ ոչ ընթացիկ տարվա հանգամանքներով:
- Ապահովել իրականացվելիք ծախսերի մասով հիմնավորվածության և անհրաժեշտության աստիճանների վերլուծություններ:

12 փետրվար 2025թ.

«ՓԸՐՖԵԲԹ ԱՌՒԴԻՏ» ՍՊԸ-ի
տնօրեն՝



Ա. Բաբայան